12308

...ԼՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ!

# ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՄԵՏԱՂԱԳՈՐԾ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

*(Ընդունված է ՀՄԲՄ VIII համագում. կողմից)*

---

# УСТАВ

## ВСЕСОЮЗНОГО СОЮЗА РАБОЧИХ МЕТАЛЛИСТОВ

... I с'ездом В.С.Р.М.)

338.88
Վ-89

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ ՀՄԲՄ ԿԿ
ՄՈՍԿՎԱ 1929 Թ.

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ԵՐԿՐՆԵ՛Ի, ՄԻԱՑԵՔ!

338.88
Կ-89

# ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՄԵՏԱՂԱԳՈՐԾ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

*(Ընդունված և ՀՄԲՄ VIII համագում. կողմից)*

Б 2001

# УСТАВ

## ВСЕСОЮЗНОГО СОЮЗА РАБОЧИХ МЕТАЛЛИСТОВ

(Принятый VIII с‘ездом В.С.Р.М.)

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀՄԲՄ ԿԿ
ՄՈՍԿՎԱ 1929 թ.

2010

22746

ՀՍՍՌ ... ИМ. А. МЯСНИКЯНА
4467-53

Главлит № А 30604. Тираж 4000.
3-я Типография ГИЗ'а Армении.
Армянскй пер. 2.

Տոմարագրված է ՀԳՄԿՄ
1928 թ. հունիսի 27-ին № 21.
ՀԳՄԿՄ քարտուղար՝
Ա. ԴՈԳԱԴՈՎ
Կազմակերպչ. բաժնի վարիչ՝
Ա. ԿԻԴՅԱՐՈՎ

## ՀԱՏՎԱԾ 1.

## ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ

*Մետաղագործ Բանվորների Համամիութենական Միությունը (Հ Մ Բ Մ) ամբողջ ԽՍՀՄ մեջ միացնելով մետաղների ու էլեքտրո-արդյունաբերության բոլոր բանվորներին ու ծառայողներին, իր առաջ դնում է հետևյալ նպատակներն ու անելիքները.—*

§ 1. *Աջակցում է կապիտալի տապալման համար համաշխարհային մասշտաբով տարվող հեղափոխական դասակարգային կռվի զարգացմանը և պրոլետարիատի դիկտատուրայի միջոցով կոմմունիզմի իրականացմանը:*

§ 2. *Կազմակերպչական կապ է հաստատում*



*

և աշխատակցում ուրիշ յերկրների նման միությունների հետ, մասնակցելով մետաղագործ բանվորների միջազգային միասնական միության կազմակերպման, միջազգային կոնֆերենցիաներին և համագումարներին, ամեն տեղ պաշտպանելով և կիրառելով հեղափոխական դասակարգային կռվի պլատֆորման:

§ 3. Դնելով վորպես վերջնական նպատակ կոմմունիզմի իրականացումը, միությունը ներկա պայմաններում վորպես հերթական անելիք իր առաջ դնում է՝

1) Կոլլեկտիվ պայմանագրեր կապելու միջոցով, պաշտպանել իր անդամների նյութական շահերը, նպատակ ունենալով առհասարակ նրանց տնտեսական դրության, աշխատանքի ու կենցաղի պայմանների բարվոքումը. բոլոր հիմնարկություններում (պետական, հասարակական) ներկայացնել նրանց շահերը, և կոնֆլիկտի դեպքում հաշտարար ատյաններում և միջնորդ դատարաններում հանդես գալ վորպես նրանց շահերի պաշտպանը, ինչպես և անհրաժեշտ դեպքում գործադուլներ կազմակերպել։

2) Աջակցել արդյունաբերության կազմակերպման ու բարձրացման մասնակցելով պլանային և կարգավորման օրգաններում, մասնակցել տնտեսական օրգանների արտադրական ծրագրների մշակման, ֆինանսական, վարձակալական, կոնցեսիաների և այլ հարցերի քննության ու լուծման։

3) Աջակցել բանվորական կոոպերացիայի կազմակերպման և նրա գործնեյության զարգացման։

4) Մասնակցել խորհրդային իշխանության կողմից մշակվող բանվորական օրենսդրության, մասնավորապես սոցիալական ապահովագրության բոլոր տեսակների կիրառման։

5) Մետաղարդյունաբերության բանվորների և ծառայողների փոխադարձ օգնության դրամարկղներ կազմակերպել և այդ դրամարկղների օրգանների ընդհանուր ղեկավարությունը:

6) Կազմակերպումը ՀՄԲՄ գործազուրկ անդամների օգնության։

7) Աջակցել մետաղարդյունաբերության բոլոր աշխատողների ընդհանուր կուլտուրական մակերևույթի բարձրացման և նրանց ֆիզիքական զարգացման:

8) Մասնակցել վորակյալ բանվորական ույժի կադրաների պատրաստման, աջակցելով պրոֆտեխնիքական կրթության և արտադրական բոլոր այլ տեսակ ուսուցումների կազմակերպման։

9) Աջակցել յերիտասարդների և պիոներների շարժման։

10) Միության անդամների իրավունքների իրավագիտական պաշտպանությունը։

§ 4. Միությունը յուր գործնեության ընթացքում ակտիվ աջակցություն է ցույց տալիս բանվորագյուղացիական իշխանության օրգաններին, ձգտելով, այդ իշխանության միջոցով զարգացնելու և իրականացնելու ներկայումս բանվոր դասակարգի առաջ դրած սոցիալիստական շինարարության գործը։

ՀՈԴՎԱԾ 2.

## ՀՄԲՄ ԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՄՈՒՆՔՆԵՐԸ

§ 5. ՀՄԲՄ-ը վերոհիշյալ նպատակների իրագործման համար, կազմակերպելով ըստ արտադրական սկզբմունքի, իր շարքերի մեջ է ընդունում մետաղա-ելեքտրո-արդյունաբերության բոլոր վարձու աշխատողներին, անկախ արհեստից (մեկ ձեռնարկություն—մեկ միություն), ազգային և կրոնական նշաններից։

§ 6. ՀՄԲՄ բաժանվում է՝ մետաղա-լեքտրո-արդյունաբերական մի շարք ձեռնարկություններ ընդգրկող, յերկրամասով միմյանց հետ կապված և տնտեսապես դեպի միմյանց ձըգտող, բայոնական բաժանմունքների։

Ծանոթ.—Բայոնական բաժանմունքի յերկրամասը կարող է չհամապատասխանել տվյալ վայրի վարչական բաժանմանը։

§ 7. ՀՄԲՄ հաշվելով իրեն ինչպես համամիութենական, այնպես էլ միջազգային պրոֆեսիոնալ շարժման մի մասը մտնում է ՀՊՄԿՄ-ը և նրա միջոցով միջազգային պրոֆմիությունների միության մեջ (Պրոֆինտերն)։

ՀՈԴՎԱԾ 3.

## ՄԻՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԸ

§ 8. ՀՄԲՄ կազմի մեջ կարող են մտնել

այս կանոնադրության յենթարկվող բոլոր 14 տարեկանի հասածները.

1) Մետաղա-էլեքտրո-արդյունաբերական ձեռնարկություններում աշխատողները (պետական, հասարակական, կոոպերատիվ, վարձակալական, կոնցեսյոն, խառնակցիոներական և մասնավորական)։

Ծանոթ.—Ժամանակավոր և սեզոնային բանվորներն ու ծառայողները միության մեջ ընդունվում են միության Կ Կ կողմից հրատարակվող հատուկ կանոնների հիման վրա։

2) Ձեռնարկությունների (փաբզործուս) և աշխատանքային կոլլեկտիվների կից գտնվող պրոֆտեխնիկական դպրոցներում սովորողները։

3) Բարձրագույն դպրոցների, բանֆակների և դպրոցական այլ հաստատությունների ուսանողները, վորոնք մինչև դպրոց մտնելը միության անդամ են յեղել։

Ծանոթ.—Բանֆակների և բարձրագույն դպրոցների ուսանողները, վորոնք մինչև դպրոց մտնելը միության անդամ չեն յեղել, միության մեջ կարող են ընդունվել միության կողմից տարվող հասարակական և կուլտ-աշխատանքներին ակտիվ մասնակցություն ցույց տալու դեպքում, ընդունելության ամեն մի առանձին դեպքում հաշվի առնելով նրանց սոցիալական դրությունը։



§ 9. Միության այն անդամները, վորոնք պատվիրակված են հասարակական զանազան կազմակերպություններ և ձեռնարկություններ և այդպիսիներում պատասխանատու աշխատանք են կատարում, կարող են մնալ միության անդամ։

§ 10. Միության այն անդամները, վորոնք զենքի յեն կոչված, կամ կամավոր կերպով մտել են բանվորագյուղացիական կարմիր բանակի և նավատորմի շարքերը, զորացրումից հետո բանակից և նավատորմից վերադառնալուց միության մեջ 6 ամսից վոչ ուշ տոմարագրվելու պայմանով—նրանց ցանկության դեպքում—մեխանիկորեն վերականգնվում են միության անդամի իրավունքներում, պահպանելով և պրոֆստաժը, վորի մեջ մտնում է և բանակում անցկացրած ժամանակամիջոցը։

§ 11. Միության անդամ չեն կարող լինել՝

1) Խորհրդային քաղաքացիության իրավունքներից զրկված անձինք.

Ծանոթ.—Վոստիկանության նախկին ծառայողները, վորոնք պարապել են հասարակ տեխնիքական և գրասենյակային աշխատանքներով, կարող են միության մեջ ընդունվել, նրանցից յուրաքանչյուրին վերաբերող ամենամանրամասն քննությունից հետո:

2) Ցարական վոստիկանության, ժանդարմերիայի առանձին կորպուսի, ախրանկաների նախկին աստիճանավորներն ու ագենտները.

3) Կուսակրոնները, յեկեղեցական ու կրոնական կուլտի հոգևոր ծառայողները, այսինքն այն անձինք, վորոնք մտնում են հոգևոր իերարխիայի կազմի մեջ և անձնապես կատարում են, այսպես կոչվող, հոգևոր խորհուրդներ և կուլտի ծեսեր, քրիստոնեյական յեպիսկոպոսները, քահանաները, սարկավագները, հրեական ռավվինները, մահմեդական մոլլաները և այլն, ինչպես և դպիրները:

Ծանոթ.—Կուլտին և կուլտի շենքերին սպասարկող տեխնիքական անձ-



նակազմին պատկանող և ընտրողական իրավունքներից չզրկված անձինք կարող են ընդունվել միության մեջ:

4) Մասնավոր սեփականատերերը, ձեռնարկությունների տերերը, առևտրականները, վարձակալները, և առհասարակ անաշխատ յեկամուտով ապրողները, յեկամուտ ստանալու նպատակով վարձու աշխատանքից ոգտվողները (անձնական կամ մասնավոր կոոպերատիվային), ինչպես և իրենց սեփական գործակալական գրասենյակ ունեցողները, ձեռնարկություններից յեկամուտ ստացողները և մասնավոր ձեռնարկությունների յեկամուտներին մասնակցող անձինք:

5) Մասնավոր-կապիտալիստական ձեռնարկությունների վարչական անձնակազմին պատկանող անձինք, ինչպես և ձեռնարկուների հավատարմերը:

6) Խառնակցիոներական ընկերությունների վարչության անդամները, յերբ նրանք ներկայացնում են մասնավոր կապիտալը, խառն ընկերությունների դիրեկտորները և վարչականները վորոնք հանդիսանում են ընկերության

*մասնավոր կապիտալիստական մասի ակցիոներները:*

*Ծանոթ.—Խառն ակցիոներական ընկերությունների վարչության անդամները, վորոնք խորհրդային պետական որգանների կողմից պատվիրակված են աշխատելու այդ ընկերություններում, իրավունք ունին միության անդամ լինելու, բայց չեն կարող միության որգաններում ընտրովի պաշտոններ վարել:*

7) *Մասնավոր, առևտրական, վաճառականական, կոնցեսյոն, մասնատիրական, ակցիոներական ձեռնարկությունների ու հիմնարկությունների տերերի մոտիկ բարեկամները՝ ծնողները, ամուսինները, վորդիները, աղջիկները, յեղբայրներն ու քույրերը, վորոնք աշխատում կամ ծառայում են տվյալ ձեռնարկություններում, անկախ նրանց վարած պաշտոնից:*

8) *Մասնավոր ձեռնարկությունների տերերի բոլոր մնացած բարեկամները, յեթե նրանք տվյալ ձեռնարկություններում վարում են հետևյալ պաշտոնները՝ վարչական-տեխնիկական*



*անձնակազմը. (ինժեներները, տեխնիկները, վարպետները. տասնապետները, ավագ հաշվապահները), առևտրական, վաճառականական, տեխնիքական գործակալները ինչպես և վարչության կողմից նշանակված ԳԿՀ անդամները, անկախ վարած պաշտոններից և բարեկամական մոտիկություններից:*

9) *Միայնակ տնայնագործները և տնայնագործական արտելների անդամները, վորոնք հանդիսանում են վորպես ինքնուրույն տերեր, մասնավորապես «պատասխանատու աշխատանքի» արտելների անդամները:*

*Ծանոթ.—Տանն աշխատող միայնակ-տնայնագործները, վորոնք չեն շահագործում ուրիշի աշխատանքը և տանը աշխատում են պետական, կոոպերատիվ կամ մասնավոր պատվիրողի համար, այս վերջիններից ստացած նյութերով, վորպիսի նյութերը ստացել են բաժանող գրասենյակներից կամ անձանցից, կարող են միության մեջ ընդունվել ամեն անդամ բայկոմի հատուկ վորոշմամբ:*

## ՀԱՏՎԱԾ 4.

# ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

§ 12. *Միության միջոցները կազմվում են՝*

1) *Միության անդամներից ամենամսյա անդամակցական մուծանքի չափով ստացվող անդամակցական մուծանքներից։*

2) *Աշխատանք ունեցող անձանց համար հաստատվում է ամեն ամսյա անդամակցական մուծանքի հետևյալ չափը—*

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 1. | *մինչև* 20 *րուբ. ստացողները, ինչպես և ուսանողներն ու աշակերտները՝* | | | | 20 *կ.* |
| 2. | 20 *ր. մինչև* | 35 *ր.* | *ստացողները* | | 40 » |
| 3. | 36 » | » | 50 » | » | 75 » |
| 4. | 51 » | » | 75 » | » | 1 *ր.* 20 » |
| 5. | 76 » | » | 100 » | » | 1 *ր.* 70 » |
| 6. | 101 » | » | 130 » | » | 2 *ր.* 30 » |
| 7. | 131 » | » | 170 » | » | 3 *ր.* — |
| 8. | 171 » | » | 220 » | » | 4 *ր.* — |
| 9. | 221 » | » | 299 » | » | 5 *ր.* — |
| 10. | 300 » | *և* | *ավել* | *ստացողները* | 8 *ր.* — |

3) *Ուրիշ հասույթներից։*

§ 13. *Միութենական բոլոր օրգանները գոյություն ունեն համապատասխան համագումարների և միութենական բարձր օրգանների կողմից կազմված նախահաշիվներով:*



§ 14. *Նախահաշիվները կազմելու ժամանակ, րայոնական համագումարների վորոշմամբ, րայկոմները կարող են ստեղծել տեղական պահեստի ֆոնդեր, սակայն այն պայմանով միայն, վոր միութենական բարձր օրգաններին (ՀԳՄԿՄ և ԿԿ) հասանելիք մասնատրումները չպետք է ցածր լինեն պրոֆմիությունների համամիութենական համագումարի վորոշած չափից։*

*Պահեստի ֆոնդերը ծախսվում են տեղական կարիքների վրա, րայկոմների նախահաշիվներով, վորոնք հաստատված են ԿԿ կողմից։*

§ 15. *Վերը ցույց տված կարգով հաստատված նախահաշիվներով ծախսերը ծածկելուց հետո մնացած բոլոր միջոցները, բացի պահեստի ֆոնդի միջոցներից, ուղարկվում են ԿԿ։*

§ 16. *ԿԿ-ի ապարատը պահելու համար, նրա կողմից ծախսվող միջոցների վերջնական տոկոսը հաստատում է ԿԿ պլենումը:*

§ 17. *ՀՄԲՄ կողմից ընդհանրապես և նրա օրգանների կողմից ապարատը պահելու համար (անձնակազմը, վարչական-տնտեսական,*

## ՀԱՏՎԱԾ 4.

## ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

§ 12. *Միության միջոցները կազմվում են՝*

1) *Միության անդամներից ամենամսյա անդամակցական մուծանքի չափով ստացվող անդամակցական մուծանքներից։*

2) *Աշխատանք ունեցող անձանց համար հաստատվում է ամեն ամսվա անդամակցական մուծանքի հետևյալ չափը—*

| | | |
|---|---|---|
| 1. | *մինչև* 20 *ռուբ. ստացողները, ինչպես և ուսանողներն ու աշակերտները՝* | 20 *կ.* |
| 2. | 20 *ռ. մինչև* 35 *ռ. ստացողները* | 40 » |
| 3. | 36 » » 50 » » | 75 » |
| 4. | 51 » » 75 » » | 1 *ռ.* 20 » |
| 5. | 76 » » 100 » » | 1 *ռ.* 70 » |
| 6. | 101 » » 130 » » | 2 *ռ.* 30 » |
| 7. | 131 » » 170 » » | 3 *ռ.* — |
| 8. | 171 » » 220 » » | 4 *ռ.* — |
| 9. | 221 » » 299 » » | 5 *ռ.* — |
| 10. | 300 » *և ավել ստացողները* | 8 *ռ.* — |

3) *Ուրիշ հասույթներից։*

§ 13. *Միութենական բոլոր օրգանները գոյություն ունեն համապատասխան համագումարների և միութենական բարձր օրգանների կողմից կազմված նախահաշիվներով:*



§ 14. *Նախահաշիվները կազմելու ժամանակ, բայոնական համագումարների վորոշմամբ, բայկոմները կարող են ստեղծել տեղական պահեստի ֆոնդեր, սակայն այն պայմանով միայն, վոր միութենական բարձր օրգաններին (ՀԴՄԿՄ և ԿԿ) հասանելիք մասնատրումները չպետք է ցածր լինեն պրոֆմիությունների համամիութենական համագումարի վորոշած չափից։*

*Պահեստի ֆոնդերը ծախսվում են տեղական կարիքների վրա, բայկոմների նախահաշիվներով, վորոնք հաստատված են ԿԿ կողմից։*

§ 15. *Վերը ցույց տված կարգով հաստատված նախահաշիվներով ծախսերը ծածկելուց հետո մնացած բոլոր միջոցները, բացի պահեստի ֆոնդի միջոցներից, ուղարկվում են ԿԿ։*

§ 16. *ԿԿ-ի ապարատը պահելու համար, նրա կողմից ծախսվող միջոցների վերջնական տոկոսը հաստատում է ԿԿ պլենումը:*

§ 17. *ՀՄԲՄ կողմից ընդհանրապես և նրա օրգանների կողմից ապարատը պահելու համար (անձնակազմը, վարչական-տնտեսական,*

կազմակերպչական ծախսերը) տեղերում և կենտրոնում ծախսվող միջոցները միության կողմից ստացվող անդամակցական մուծանքների գումարի 1/3-ից ավելի չպետք է լինի:

§ 18. Միության անդամներին նյութական, իրավագիտական-իրավական, կուլտ-կրթական շրջանաններում ցույց տրվելիք օգնության նպատակով ՀՄԲՄ բոլոր միջոցները, բացի միության ապարատի վրա արվելիք ծախսերից, միության ոպերատիվ գործնեության համար բաժանվում են հատուկ նշանակման ֆոնդերի:

Ծանոթ.—Առանձին ֆոնդերում ավելցուկներ կամ պակասորդներ յերևան գալու դեպքում, այդ ֆոնդերը լրացնելու համար հարկավոր մասնատրումների չափի հարցը կարող է վերաքննվել միության համագումարի կողմից, իսկ համագումարների արանքում ԿԿ պլենումի կողմից:

§ 19. Հատուկ նշանակման ֆոնդերի ծախսման կարգը վորոշվում է ԿԿ պլենումի կողմից:

§ 20. ՀՄԲՄ ինչպես տեղական այնպես էլ կենտրոնական օրգանները միջմիութենական ինչպես կենտրոնական, այնպես էլ տեղական օրգանները պահելու համար հարկավոր մասնատրումները կատարում են միջմիութենական համագումարների վորոշած չափերով:

§ 21. Այն ժամանակաշրջանները, վորոնց համար պետք է կազմվեն նախահաշիվներ և ֆինանսական հաշվետվություններ, վորոշվում են Կենտրոնական Կոմիտեյի հատուկ վորոշմամբ:

§ 22. Միութենական բոլոր օրգաններում—գործկոմից մինչև ԿԿ միութենական բոլոր գումարների գանձման, պահելու և ճիշտ կերպով ծախսելու համար, միութենական ընտրովի օրգանների կողմից ընտրվում են գանձապահներ, ըստ վորում գանձապահի ֆունկցիաները չեն կարող տրվել վոչ նախագահի և վոչ էլ քարտուղարի վրա:

Ծանոթ.--Միության օրգաններում, վորտեղ կան ընթացիկ աշխատանքից ազատված մեկ կամ յերկու ընտրովի աշխատավոր, գանձապահի պարտականությունները կատարում է միության օրգանի այն ընտրովի անդամը, վորը ազատված չէ ընթացիկ աշխատանքից:

կազգակերպչական ծախսերը) տեղերում և կենտրոնում ծախսվող միջոցները միության կողմից ստացվող անդամակցական մուծանքների գումարի 1/3-ից ավելի չպետք է լինի:

§ 18. Միության անդամներին նյութական, իրավագիտական-իրավական, կուլտ-կրթական շրջանաններում ցույց տրվելիք օգնության նպատակով ՀՄԲՄ բոլոր միջոցները, բացի միության ապարատի վրա արվելիք ծախսերից, միության ոպերատիվ գործնեության համար բաժանվում են հատուկ նշանակման փոնդերի:

Ծանոթ.—Առանձին փոնդերում ավելցուկներ կամ պակասորդներ յերևան գալու դեպքում, այդ փոնդերը լրացնելու համար հարկավոր մասնատրումների չափի հարցը կարող է վերաքննվել միության համագումարի կողմից, իսկ համագումարների արանքում ԿԿ պլենումի կողմից:

§ 19. Հատուկ նշանակման փոնդերի ծախսման կարգը վորոշվում է ԿԿ պլենումի կողմից։

§ 20. ՀՄԲՄ ինչպես տեղական այնպես էլ կենտրոնական որգանները միջմիութենական



ինչպես կենտրոնական, այնպես էլ տեղական որգանները պահելու համար հարկավոր մասնատրումները կատարում են միջմիութենական համագումարների վորոշած չափերով:

§ 21. Այն ժամանակաշրջանները, վորոնց համար պետք է կազմվեն նախահաշիվներ և ֆինանսական հաշվետվություններ, վորոշվում են Կենտրոնական Կոմիտեյի հատուկ վորոշմամբ։

§ 22. Միութենական բոլոր որգաններում—գործկոմից մինչև ԿԿ միութենական բոլոր գումարների գանձման, պահելու և ճիշտ կերպով ծախսելու համար, միութենական ընտրովի որգանների կողմից ընտրվում են գանձապահներ, ըստ վորում գանձապահի ֆունկցիաները չեն կարող տրվել վոչ նախագահի և վոչ էլ քարտուղարի վրա։

Ծանոթ.--Միության որգաններում, վորտեղ կան ընթացիկ աշխատանքից ազատված մեկ կամ յերկու ընտրովի աշխատավոր, գանձապահի պարտականությունները կատարում է միության որգանի այն ընտրովի անդամը, վորը ազատված չէ ընթացիկ աշխատանքից:

§ 23. Գանձապահը ընտրվում է միության օրգանի կողմից իր կազմից՝ հաշվետու յե միության օրգանի առաջ և աշխատում է նրա ղեկավարությամբ:

§ 24. Գանձապահի ֆունկցիաները և պարտականությունները.

ա) հսկել, վոր միության օրգանի դրամարկղը իր ժամանակին և լրիվ մտցնվեն վորոշված մուծանքները.

բ) հսկել, վոր անդամակցական մուծանքները ձեռնարկություններում ու հիմնարկություններում կանոնավոր գանձվեն դրամահավաքների կողմից և հավաքվող միջոցները իր ժամանակին ներկայացվեն միութենական օրգաններին.

գ) Դրամական հասույթների իր ժամանակին բաշխումն համապատասխան նախահաշվային յենթադրությունների և միութենական օրգանի հատուկ ցուցմունքների համաձայն, միութենական զանազան օրգանների միջև հաստատված ֆինանսական փոխհարաբերությունների հիման վրա.

յե) դրամական միջոցների պահելը, տվյալ



օրգանի մողմից վորոշված հիմնարկություններում.

զ) միութենական օրգանի ծախսերի կատարումը համաձայն հաստատված նախահաշիվների՝ հսկել կանոնավոր հաշվապահության տարվելու և միութենական բարձր օրգանների առաջ ունեցած ֆինանսական պարտականությունների իր ժամանակին կատարելու վրա:

է) հատուկ ֆոնդերի պահելն ու ծախսելը համապատասխան օրգանի կողմից հաստատված կանոնադրության հիման վրա.

ը) հսկել, վոր միութենական տվյալ օրգանի ֆինանսական գործնեության հաշվետվությունները միութենական ժարձր օրգանների հրահանգով վորոշած կարգով, ժամկետով և ձևով կազմվեն, և իր ժամանակին ներկայացվեն միութենական բարձր օրգաններին:

§ 25. Գանձապահն է ներկայացնում միութենական օրգանի ֆինանսական դրության վերաբերող հաշվետվությունները և զեկուցումները:

§ 26. Ընտրովի գանձապահների ինստիտուտ ստեղծելը միութենական օրգաններին ընդ-

հանրապես չի ազատում ամբողջ ֆինանսական աշխատանքի պատասխանատվությունից:

Հ Ո Տ Վ Ա Ծ 5.

## ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄԱԳՐՎԵԼԸ

§ 27. *Միության անդամագրվելը կատարվում է անդամագրվել ցանկացողի կողմից գործկոմին, ցեխբյուրոյին կամ պատվիրակին արվող գրավոր կամ բանավոր հայտարարության ճանապարհով:*

§ 28. *Միության անդամագրվելու ցանկության մասին արված բոլոր հայտարարությունները գործկոմի, ցեխպրոֆբյուրոյի կողմից-իրենց յեզրակացություններով—ներկայացվում են միության անդամների ընդհանուր (ցեխային, հերթափոխների և գրուպպային) ժողովներին, հայտարարություն տրված օրվանից մի ամսից վոչ ուշ:*

§ 29. *Միության անդամ ընդունվելը կատարվում է տվյալ հիմնարկության մեջ աշխատող միության անդամների ընդհանուր (ցեխային կամ հերթափոխների) ժողովի կողմից:*

*Ծանոթ.—Միութենական բարձր օրգաններին է մնում ժողովների վորոշումների բեկանելու իրավունքը:*



§ 30. *Միությանը անդամագրվելու մասին հայտարարողը միության անդամության իրավունքը ձեռք է բերում, ընդհանուր (ցեխային, հերթափոխների) ժողովի հաստատելուց և անդամակցական մուծանք վճարելուց հետո:*

§ 31. *Միայնակներին միության անդամ ընդունելը կատարվում է համապատասխան բաժկոմի կամ յենթաբաժկոմի հաստատելուց հետո: Իսկ աշխատանքի զանազան վայրերում (յերկաթուղիների գծերի վրա աշխատողները) ցրված, շարունակ գործուղղումներով շրջող և այլն անձանց միության մեջ ընդունվելը կատարվում է գործկոմների կողմից:*

§ 32. *Մետաղա-ելեքտրո-արդյունաբերական ձեռնարկությունները փոխադրված արտադրական ուրիշ միությունների անդամները, միության անդամ են ընդունվում հին անդամի իրավունքներով, առանց անդամագրման մուծանք վճարելու, պահպանելով նախկին պրոֆստաժը:*

*Փոխադրվածի համար ՀՄԲՄ անդամատոմս գրելուց հին անդամատոմսը շիջեցվում է և*

թողնվում տիրոջ մոտ: Անդամատոմսի ջնջեցման մասին հայտնվում է անդամատոմս տված կազմակերպությանը:

Ծանոթ.—Ոտարյերկրացիները, դասակարգային կռվի տեսակետի վրա կանգնած արտասահմանյան միությունների անդամները, վորոնք ներկայացնում են միության անդամատոմսեր, վորից յերեվում է անդամակցական մուծանքների ճշտապահ վճարումը, ընդունվում են միության մեջ, ԽՍՀՄ մեկ պրոֆմիությունից մյուսը փոխադրվողների համար վորոշված կարգով:

ՀԱՏՎԱԾ 6.

## ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

§ 33· Միության բոլոր անդամները, կուլտուրական և իրավական սահմաններում, ոգտվում են միության ամեն տեսակի պաշտպանությունից և աջակցությունից: Այդ իրագործելու համար, միությունը վոչ միայն ինքն



է տալիս, այլև ձգտում է, վոր պետական, հասարակական կազմակերպություններն ու անձինք նույնպես առանձին առավելություններ, սպասարկումներ և արտոնություններ տան իր անդամներին ու նրանց ընտանիքներին.

1) Աշխատանքի շրջանում (աշխատանքի ընդունվելուց և հեռացվելուց, ապահովության գործազրկության դեպքում).

2) Ժողովրդական կրթության շրջանում (ուսումնարանական, դաստիարակչական և կուլտուրական հիմնարկություններում ընդունելը).

3) Ժողովրդական առողջապահության շրջանում (բժշկական հիմնարկություններից, բժշկական ոգնություն և դեղորայք ստանալը).

4) Հանրապետությունների Միության յերկաթուղային և ջրային ճանապարհներով տեղափոխություններ կատարելու դեպքում.

5) Դատաստանական գործերի դեպքում.

6) Բնակարանային գործերում.

§ 34· Միության 18 տարեկանի հասած բոլոր անդամները ոգտվում են միության ամեն տեսակ պաշտոնների համար ընտրելու և ընտրվելու իրավունքից:

Ծանոթ.—Միության 18 տարեկանի չհասած անդամները օգտվում են միայն ընտրելու իրավունքից, բայց չեն կարող ընտրվել:

§ 35. Միության յուրաքանչյուր անդամ իր ձեռնարկության (հիմնարկության) մեջ աշխատող միության անդամների ընդհանուր ժողովներում և միության անդամների ընդհանուր քաղաքային ժողովներում, միության գործնեության վերաբերող բոլոր հարցենում, վճռական ձայն ունի, ինչպես և իրավունք ունի միության օրգանների քննությանը—միությանը և նրա պաշտոնյաների գործնեության վերաբերող հարցեր դնելու և առաջարկություններ անելու:

§ 36. Միության յուրաքանչյուր անդամ պարտավոր է անդամակցական մուծանքները ճշտորեն և ամեն ամիս վճարել, միութենական օրգանների բոլոր վորոշումների և վճիռների կիրառմանը աջակցել, միութենական և պրոլետարական դիսցիպլինային յենթարկվել, և կոլեկտիվ պայմանագրերի բոլոր կետերը կատարել:



Ծանոթ.—Մի քանի ամսվա ընթացքում չվճարած անդամակցական մուծանքներից գոյացած պարտքի առկայության դեպքում, այդ պարտքը չի կարող շիջուցվել մաս-մաս. այդպիսի պարտքը պետք է շիջուցվի միանվագ:

§ 37. Միութենական գործնեության վերաբերող բոլոր հարցերը վճռվում են բաց քվեարկությամբ, ձայների հասարակ մեծամասնությամբ:

§ 38, Միության անդամները—գործազուրկները, ամեն ամիս նշանառվելու պայմանով, ինչպես և ժամանակավորապես աշխատունակությունը կորցրածները, անդամակցական մուծանքներ վճարելուց ազատվում են:

ՀԱՏՎԱԾ 7.

## ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԻՑ ՎՏԱՐՎԵԼԸ

§ 39. Միության կանոնադրությունը խախտող, միութենական պարտականությունները և միութենական օրգանների վորոշումները սիստեմատիկաբար ու չարանենգությամբ չը

կատարող և կատարելուն խոչնդոտ հանդիսացող, պրոֆմիութենական կազմակերպությունների հեղինակությունը իրենց գործունեությամբ գիտակցաբար վարկաբեկող անդամները կարող են միութենական օրգանների վորոշմամբ, վտարվել միությունից:

§ 40. Բացի դրանից, միությունից վտարվելու յենթակա յեն՝

1) Քրեական ոճրագործության համար քաղաքացիական իրավունքների սահմանափակումով դատապարտվածները.

2) Իրենց տնօրինության տակ գտնված գումարները կամ այլ արժեքները յուրացրած պաշտոնատար անձինք (անդամակցական մուծանքների և հասարակական միջոցների վատնումը).

3) Կաշառակերության մեջ բռնվածները.

4) Միութենական օրգանի կողմից հավանություն ստացած կամ հայտարարված գործադուլի ժամանակ շտրեյկբրեխերության արածները:

§ 41. ՀՄԲՄ մեքենայաբար հեռացված են համարվում՝

1) Ուրիշ միության կողմից միացվող ձեռնարկության մեջ աշխատանքի անցած և այնտեղ յերկու ամսից ավել աշխատածները, սույն կանոնադրության § 9 նախատեսնված անձանց բացառությամբ.

2) Առանց հարգելի պատճառների յերեք ամսվա ընթացքում անդամակցական մուծանք չվճարածները:

Ծանոթ. 1-ին:—Յերեքամսյա անդամակցական մուծանք չվճարածների վերաբերմամբ միությունից հեռացած համարելը կարող է տեղի ունենալ միության օրգանի համապատասխան զգուշացումից հետո

Ծանոթ. 2-րդ.—Անդամակցական մուծանքներ չվճարելու պատճառների հարգելի կամ վոչ հարգելի լինելը, վորոշվում է միության տեղական կազմակերպության կողմից: Սույն կետին համապատասխանող պատճառներով հեռացածները կարող են նորից հետ ընդունվել միության մեջ:

Այդ դեպքում նորից ընդունվածները միության անդամ են հաշվվում յերկ-

րորդ անդամ մտնելու մոմենտից, առանց հաշվելու նախկին պրոֆստաժը։

Առանձին դեպքերում, ռայոնական կոմիտեյի հատուկ վորոշմամբ այդպիսի անձանց պրոֆստաժը կարելի յե վերականգնել, չվճարած ժամանակի անդամակցական մուծանքները վճարելու պայմանով։

3) Գործազուրկները, վորոնք գործազրկության որվանից 3 ամսվա ընթացքում, առանց հարգելի պատճառների, միության մեջ չեն ռամարագրվել.

4) Աշխատունակությունը ամբողջովին կորցրած բանվորներն ու ծառայողները, ակսած սոցիալական ապահովագրության կամ այլ հիմնարկության ու անձանց խնամքին անցնելու մոմենտից։

Ծանոթ.—Առանձին դեպքերում ռայոնական կոմիտեյի, կամ ԿԿ հատուկ վորոշմամբ, աշխատունակությունը ամբողջովին կորցրածները կարող են թողնվել միության մեջ, յերբ նրանք հանդիսանում են հեղափոխության վաստակավոր վետերաններ, պրոֆշարժման



վաստակավոր գործիչներ, աշխատանքի հերոսներ և այլն։

§ 42. Յուրաքանչյուր վտարումն, անկախ այն բանից, թե միութենական վոր օրգանի կողմից է նա կիրառվում, պետք է կատարվի այն ձեռնարկության կամ հիմնարկության միության անդամների ընդհանուր (ցեխային կամ հերթափոխների) ժողովներում, վորտեղ աշխատում է վտարվողը,

Գործազուրկների և միայնակների (одиночек) վտարումը կատարվում է ռայոնական կամ յենթառայոնական կոմիտեների վորոշմամբ:

§ 43. Միությունից վտարելուն վերաբերող հարցերը ռայկոմի, գործկոմի, ցեխային կամ հերթափոխների ժողովի, կամ միության առանձին անդամների կողմից (գործկոմի միջոցով) դրվում են ընդհանուր կամ նրան փոխարինող պատվիրակային ժողովի քննությանը։ Ընդհանուր կամ պատվիրակային ժողովի վորոշումները յենթակա յեն միության ռայկոմի քննությանը, վորը հաստատում կամ բեկանում է ժողովի կողմից ընդունված վճիռը։ Վտարման մոմենտը համարվում է ընդհանուր

ժողովի վորոշումը, վորը հաստատված է միության րայկոմի կողմից։

§ 44. Միությունից վտարելը կարող է կատարվել ինչպես վորոշ ժամանակով, վորպիսին անցնելուց հետո վտարվածը կարող է խնդրանք ներկայացնել նորից միության մեջ ընդունվելու համար, այնպես էլ անորոշ ժամանակով։ Անորոշ ժամանակով վտարվածները չեն կարող խնդրանք ներկայացնել իսկ միութենական որգաններն էլ չեն կարող այդ խնդրանքները քննել վոչ շուտ, քան վտարվելուց մի տարի հետո։

Ծանոթ. 1-ին.—Վտարման ժամանակամիջոցը անցնելուց հետո, վտարվածի խնդրանքի համաձայն, նրան միության մեջ նորից ընդունվելու հարցը վճռվում է միութենական այն կազմակերպության կողմից, վորի րայոնում գրանցվում է վտարվածը։

Ծանոթ. 2-րդ.—Վորոշ ժամանակով վտարվածի գործազրկության փաստը չի կարող արգելք հանդիսանալ նրան միության մեջ նորից ընդունվելուն։ Անորոշ ժամանակով վտարվածը միության մեջ



նորից ընդունվելու խնդրանք կարող է ներկայացնել այն ժամանակ միայն, յերբ նա զբաղված է վարձու աշխատանքով։

§ 45. Միության անդամությունից վտարվածները, վտարման ամբողջ ժամանակընթացքում, կորցնում են միության անդամի բոլոր իրավունքները և միության մեջ նորից մտնելուց ընդունվում են անդամագրման մուծանք վճարելուց հետո, առանց պահպանելու նախկին պրոֆստաժը։

Ծանոթ.—Առանձին դեպքերում վտարվածի աշխատանքային և միութենական մեծ ստաժի առկայության դեպքում՝ միությունից ժամանակավորապես վտարվածի ստաժը համապատասխան րայկոմի վորոշմամբ, կարելի յե վերականգնել։

§ 46. Միության կանոնադրության համաձայն, միության անդամ լինելու իրավունքը կորցրած անձանց հեռացումը կատարվում է միության րայոնական կոմիտեյի կողմից, տեղեկացնելով այդ մասին հիմնարկության կամ ձեռնարկության ընդհանուր կամ պատվիրակային ժողովին։

§ 47. *Միությունից վտարվածները, ինչպես և միությունից մեքենայաբար կամ իրենց կամքով հեռացածները չեն կարող պահանջել, վոր միության մեջ յեղած ժամանակաընթացքում նրանց կողմից վճարված մուծանքները վերադարձվեն։*

§ 48. *Վտարելու մասին յեղած վորոշումները շահագրգռված անձանց կողմից կարող են գանգատրկվել միութենական բարձր օրգանների առաջ հետևյալ կարգով. ընդհանուր ժողովների վորոշումները- միջմիութենական համապատասխան օրգանների և Կենտրոնական Կոմիտեյի կամ հանրապետական, յերկրային, կամ շրջանային կոմիտեների առաջ, յեթե այդպիսիները կան։ Վերջիններիս վորոշումները—ԿԿ առաջ։ Վերադասման բարձր ատյանը՝ ՀՊՄԿ Միությունն է։*

*Ծանոթ.* 1-*ին.—Վորպես կանոն վտարելու մասին յեղած հարցերը քննելու ժամանակ հրավիրվում են շահագրգռված անձինք, ըստ վորում շահագրգռված անձի ժողովին չգալը—նրան հայտարարված լինելու առկայության դեպքում—վտարման հարցի վճիռը չի կասեցնում.*



*Ծանոթ.* 2. *—Միութենական օրգանները պարտավոր են վտարվածին ցույց տալու վոչ միայն գանգատվելու կարգը, այլև ոգնելու նրանց գանգատների ամենաարագ վճռմանը։*

## ՀԱՏՎԱԾ 8.

## ՄԻՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

1. *Միության օրգանները ձեռնարկություններում՝*

*ա) Միության անդամների ընդհանուր ժողովը.*

§49. *Ձեռնարկություններում միության սկզբնական ստորին կազմակերպությունը հանդիսանում է միության անդամների ընդհանուր ժողովը, վորը միաժամանակ տվյալ ձեռնարկության (հիմնարկ.) մեջ հանդիսանում է միութենական և բարձր օրգանը։*

§ 50. *Ընդհանուր ժողովի անելիքները՝*

1) *Գործարանային կոմիտեյի և վերստուգիչ հանձնաժողովի ընտրությունը.*

*Ծանոթ.— Գործկոմի և վերստուգիչ հանձնաժողովի ընտրություններին մաս-*

նակցում են տվյալ ձեռնարկության մեջ աշխատող և այն անձինք, վորոնք միության անդամ չեն, բայց միության անդամ լինելու իրավունք ունեն։ Սակայն միայն միության անդամները իրավունք ունեն ընտրվելու վերը հիշած օրգանների կազմի անդամ։

2) Միութենական կոնֆերենցիաների և համագումարների պատվիրակների ընտրությունը.

Ծանոթ.—Միայն միության անդամները կարող են միութենական կոնֆերենցիաների և համագումարների պատվիրակներ ընտրվել և ընտրել։

3) Գործկոմի աշխատանքների պլանի քննությունը և հաստատումը (հրահանգ).

4) Միութենական գործունեության վերաբերող բոլոր հարցերի քննությունը և կյանքում նրանց կիրառելու պլանի նախագծումը.

5) Այն բոլոր հարցերի քննությունը, վորոնք պետք է վճռվեն զանազան համագումարներում, կոնֆերենցիաներում և խորհրդակցություններում, ուր ձեռնարկություններից ներկայացուցիչներ են ուղարկվում։



6) Միության անդամ ընդունելը և միությունից վտարելը.

7) Գործկոմի, վերստուգիչ հանձնաժողովի, գործկոմին կից գործող հանձնաժողովների (աշխատանքի պաշտպանության, կուլտ-հանձնաժողով, ԳԿՀ և այլն), համագումարների, զանազան հիմնարկությունների և կազմակերպությունների համար ընտրված ներկայացուցիչների հաշվետվությունների ընկընդրությունը։

8) Գործարանային վարչության կողմից ձեռնարկության կյանքին վերաբերող հարցերի մասին արվող զեկուցումների ընկընդրությունն, առաջի հերթին աշխատավարձի և բանվորների կենցաղի հարցերին վերաբերող զեկուցումները։

9) Կոլլեկտիվ պայմանագրերի քննությունը։

§ 51. Ընդհանուր ժողովների բոլոր վճիռները ու վորոշումները պարտադիր են միության բոլոր անդամների և գործկոմի համար։

Ծանոթ.—Ընդհանուր ժողովների վճիռները միութենական բարձր օրգանի վորոշումներին հակասելու դեպքում, կարող են բեկանվել րայկոմի (յենթարայկոմի) կողմից։

§ 52. Ձեռնարկություններում և հիմնարկություններում միության անդամների ընդհանուր ժողովները գումարվում են՝ մինչև 200 աշխատող լինելուց ամսական մեկ անգամ, 200-ից ավել լինելուց, պատվիրակային ինստիտուտի առարկայության դեպքում, 2 ամիսը մեկ անգամ:

*Ծանոթ.—Միության բոլոր անդամների 1/3 պահանջմամբ, գործկոմը պարտավոր է ընդհանուր ժողով գումարելու և վորոշած ժամկետից առաջ:*

*բ) Պատվիրակային ժողովները.*

§ 53. Միության անդամների ընդհանուր ժողովների համար միության գործնեության վերաբերող հարցերը նախապատրաստելու և միության ավելի լայն մասսաները պրոֆեսիոնալ ու տնտեսական ակտիվ աշխատանքներին մասնակցել դրդելու նպատակով, միության 200-ից ավելի անդամ ունեցող ձեռնարկություններում (հիմնարկություններում) ստեղծվում են պատվիրակային ժողովներ:

§ 54. Պատվիրակային ժողովները հանդիսանալով ընդհանուր ժողովների օժանդակ օրգանները, չեն կարող փոխարինել ընդհանուր ժողովներին և զուրկ են գործարանային կոմիտե ու նրա օրգաններ ընտրելու իրավունքից:

§ 55. Պատվիրակային ժողովների բոլոր վորոշումները պարտադիր են գործկոմի ու նրա օրգանների համար, յեթե նրանք չեն հակասում միութենական բարձր օրգանի և ընդհանուր ժողովի վորոշումներին:

§ 56. Պատվիրակային ժողովները գումարվում են ըստ կարիքի, սակայն ամիսը մի անգամից վոչ պակաս:

§ 57. Պատվիրակների ընտրությունները կատարվում են գրուպպաների ժողովներում: Գրուպպաների չափը վորոշվում է պատվիրակների կողմից սպասարկվող աշխատողների քանակով:

*Ծանոթ.—Միայն միության անդամները կարող են պատվիրակներ ընտրվել:*

§ 58. Պատվիրակների ընտրությունների համար անհրաժեշտ նորմաները վորոշվում են րայկոմի կամ յենթարայկոմի կողմից, յուրաքանչյուր ձեռնարկության (ձեռնարկությունների գրուպպաների) համար առանձին-առան-

ձին, բայց չեն կարող բարձր լինել հետևյալներից՝

ա) 200—3000 աշխատող ունեցող ձեռնարկություններում պատվիրակային ժողովների համար միության 10—20 անդամին 1 պատվիրակ։

բ) 3000-ից ավելի աշխատող ունեցող ձեռնարկություններում միության 50 անդամին 1 պատվիրակ:

§ 59. Միության 1500 անդամ ունեցող ձեռնարկություններում, վորտեղ տեխնիքապես դժվար է ընդհանուր ժողովներ գումարելը, պատվիրակային ժողովները փոխարինում են միության անդամների ընդհանուր ժողովներին, ոգտվում են ընդհանուր ժողովներին վերապահված իրավունքներից և գումարվում են ընդհանուր ժողովների համար վորոշված ժամկետներում և նույն կարգով։

Ծանոթ.—Միության 1000 անդամ ունեցող ձեռնարկություններում գործկոմ ընտրելու համար հրավիրվում է ընդհանուր գործարանային կոնֆերենցիա 20 անդամին 1 ներկայացուցիչ ընտրելու նորմայով։



§ 60. Պատվիրակները ընտրվում են 1/2 տարով:

Ծանոթ. 1-ին.—Այս կամ այն ցեխի պատվիրակի՝ արձակման կամ հիվանդության պատճառով, հեռանալու դեպքում, այդպիսի պատվիրակին ընտրողական կարգով փոխարինում է ուրիշ պատվիրակ:

Ծանոթ. 2-րդ.—Պատվիրակը կարող է վերընտրվել և մինչև նրա համար վորոշված ժամկետը, նրան պատվիրակ ընտրող գրուպպայի կեսից վոչ պակասի պահանջով:

§ 61. Գործկոմի և ցեխպրոֆբյուրոյի անդամները և ցեխլիազորները պատվիրակային ժողովներում վճռական ձայնի իրավունք ունին:

62. Պատվիրակային ժողովների բոլոր վճիռների մասին պատվիրակները հաշվետվություն են ներկայացնում իրենց ընտրողներին:

§ 63. Ցեխի պատվիրակները գործկոմի, ինչպես և միութենական բարձր օրգանների կողմից կարիքի դեպքում կանչվում են միութենական պատվերներ կատարելու։

§ 64. Գործկոմի կողմից պատվիրակային ժողով պետք է գումարվի և ժամկետից առաջ, նրա մասնակցողների ընդհանուր թվի 1/2-ի պահանջմամբ:

դ) Ցեխային ժողովները.

§ 65. Ցեխային ժողովների ֆունկցիաները.

1) Ընդհանուր գործարանային կոնֆերենցիաների պատվիրակների ընտրությունը.

2) Պատվիրակային ժողովի, գործարանային կոմիտեյի և միութենական այլ օրգանների ու հանձնաժողովների, ինչպես և ցեխի աշխատանքի և դրության մասին արվող հաշվետվությունների և տեղեկացումների ընկընդրությունը.

3) Ցեխբյուրոյի և ցեխլիազորի ընտրությունը.

4) Գործկոմի և վերստուգիչ հանձնաժողովի թեկնածուների նախնական քննությունը.

5) Միության անդամներ ընդունելությունն ու վտարումը.

§ 66. Ցեխային ժողովները գումարվում են ըստ կարիքի։

§ 67. Ցեխային ժողովների վորոշումները հաստատվում են գործկոմի կողմից:



ե) Ձեռնարկություններում միութենական ժողովներ գումարելու յեվ վարելու կարգը.

68. Միության անդամների ընդհանուր ժողովները, պատվիրակային ժողովը, ընդհանուր գործարանային կոնֆերենցիան և ընդհանուր ցեխային ու հերթափոխների ժողովները գումարվում են գործկոմի կողմից.

§ 69. Միության անդամների յուրաքանչյուր ընդհանուր ժողովում աշխատանքները ղեկավարելու համար նախագահություն է ընտրվում։

§ 70. Պատվիրակային ժողովը իր նիստերի ժամանակ հատուկ նախագահություն չի ընտրում այլ ղեկավարվում է գործկոմի կողմից։

§ 71. Ընդհանուր պատվիրակային ժողովների և ընդհանուր գործարանային կոնֆերենցիաների գումարման ժամանակի մասին գործկոմը նախօրոք տեղեկացնում է րայկոմին (յենթարայկոմին)։

§ 72. Ձեռնարկություններում միութենական բոլոր ժողովները գումարվում են աշխատանքից ազատ ժամանակ։ Բացառիկ դեպքերում րայկոմի (յենթարայկոմի) վորոշմամբ, ժո-

ղով կարելի յե գումարել և աշխատանքի ժամանակ։

§ 73. Ձեռնարկությունների վերը ցույց տված միութենական բոլոր ժողովները լիազոր են համարվում, ժողովներին վճռական ձայնի իրավունքով մասնակցողների 1/2-ից վոչ պակասի առկայության դեպքում, իսկ գործկոմի ընտրության ժամանակ 2/3-ի առկայության դեպքում։

Ծանոթ. 1-ին.—Այս կամ այն ժողովը բացելու համար անհրաժեշտ քանակի բացակայության դեպքում, ժողովը նշանակվում է յերկրորդ անգամ և իրավազոր է համարվում հավաքվածների ամեն մի քանակի դեպքում։

Ծանոթ. 2-րդ.— Գործկոմ ընտրելու համար հավաքված ժողովում պահանջվում է ընտրելու իրավունք ունեցողների կեսից վոչ պակաս թիվ։

յե) Ցեխային բյուրո.

§ 74. Ցեխային բյուրո կազմակերպվում է 1000 հոգուց վոչ պակաս և 300 ու ավել աշխատող ունեցող ձեռնարկություններում։ Բայց



այն պայմանով միայն, վոր ձեռնարկության մեջ այդպիսի ցեխերի թիվը յերեքից պակաս չլինի։

75. Ցեխբյուրոն հանդիսանում է գործկոմի ոժանդակ որգանը և իրենով փոխարինում է ցեխի լիազորին (և հերթափոխների լիազորին) և առհասարակ գործում է ցեխլիազորներին վերաբերող կանոնադրությամբ նախատեսնված հիմունքներով։

§ 76. Ցեխային բյուրոն ընտրվում է 1—9 մարդու կազմով կես տարի ժամանակով և հաստատվում է գործարանային կոմիտեյի կողմից։

դ) Գործարանային կոմիտե

77. Գործարանային կոմիտեն կազմակերպվում է պետական, հասարակական, կոնցեսյոն և մասնատիրական մետաղա-էլեկտրո-արդյունաբերության բոլոր ձեռնարկություններում, ինչպես և աշխատանքային բորսաների կողմից կազմակերպվող և 25 մարդ բանվոր ու ծառայող ունեցող աշխատանքային կոլլեկտիվներում։

Ծանոթ. 1-ին.—25 մարդուց պակաս բանվորներ ու ծառայողներ ունեցող ձեռ-

նարկություններում գործկոմի ֆունկցիաները կատարում է ընդհանուր գործարանային ժողովի կողմից ընտրված պրոֆլիազորը։

Ծանոթ. 2-րդ.—25 մարդուց պակաս աշխատավորներ ունեցող ձեռնարկություններում բայկոմի վորոշմամբ թույլատրվում է գրուպպկոմի և միացյալ կոմիտեների կազմակերպումն ըստ յերկրամասի նշանի։

Ծանոթ. 3-րդ.—Աշխատանքային կոլեկտիվներում գործկոմները կազմվում են հարյուր և ավելի աշխատավորների առկայության դեպքում։

§ 78. Գործկոմը, սույն կանոնադրության հիման վրա, ձեռնարկություններում տանում է միութենական ամբողջ աշխատանքը, ղեկավարվելով միութենական բարձր որգանների, ձեռնարկություններում աշխատող միության անդամների ընդհանուր ժողովների, ընդհանուր գործարանային կոնֆերենցիաների և պատվիրակային ժողովների հրահանգներով։

§ 79. Գործկոմը իր աշխատանքի համար պատասխանատու յե ինչպես իրեն ընտրողների այնպես ել միութենական բարձր որգանների առաջ։



§ 80. Գործկոմի հիմնական ու անմիջական անելիքը հանդիսանում է իր ձեռնարկության բանվորների և ծառայողների եկոնոմիական շահերի պաշտպանությունը և նրանց կենցաղային ու կուլտուրական կարիքների բավարարումն. գործկոմը այդ նպատակով՝

1) Ձեռնարկության բոլոր աշխատողներին գրավում է միության մեջ, նրանց մեջ զարգացնելով դասակարգային գիտակցությունը և միութենական դիսցիպլինան.

2) Ձեռնարկության կյանքին վերաբերող բոլոր հարցերում և դեպքերում, վարչության առաջ հանդես է գալիս վորպես ձեռնարկության մեջ աշխատողների ներկայացուցիչ.

3) Միութենական և բոլոր այլ որգաններում ու հիմնարկություններում հանդես է գալիս վորպես ներկայացուցիչ.

4) Անդամակցական մուծանքներ հավաքելու համար ընտրված հավաքողների միջոցով հավաքում է այդ մուծանքները, և միության վորոշած կարգով ներկայացնում բայկոմին.

5) Իր ներկայացուցիչներին ուղարկում է

գնահատիչ-կոնֆլիկտային հանձնաժողովները։

6) Հետևում է գործարանում տարվող սակացույցի (տարիֆի) աշխատանքներին։

7) Պատրաստում է կոլեկտիվ պայմանագրեր կնքելու նյութերը, մասնակցում է այդ պայմանագրերը կնքելուն և հետևում է նրանց կիրառմանը։

8) Հետևում է բանվորներ և ծառայողներ վարձելու և արձակելու աշխատանքներին, համաձայն աշխատանքի օրենքի կոդեքսի։

9) Հետևում է բանվորների ու ծառայողների աշխատավարձի իր ժամանակին վճարելուն։

10) Հետևում է արհեստանոցներում սանիտարական կանոնների կատարման և աշխատանքի ապահովության լավ պայմաններ ստեղծելուն։

11) Հետևում է վարչության կողմից աշխատանքի ապահովության և սոցիալական ապահովագրության բոլոր նորմների կատարելուն և ապահովագրական մուծանքները իր ժամանակին մտցնելուն։

12) Մասնակցում է բանվորներին բնակարանով ապահովելու գործին։



13) Հետևում է դեռահասների և կանանց աշխատանքի ապահովության կիրառմանը։

14) Աջակցում է կոոպերացիայի զարգացմանը։

15. Տանում է փոխադարձ օգնության դրամարկղներ կազմակերպելու աշխատանքները և իրականացնում նրանց ընդհանուր ղեկավարությունը։

16) Տանում է դասընթացքներ, ակումբներ, գրադարաններ և այլն կազմակերպելու աշխատանքներ։

17) Աջակցում է պետորգանների և տնտեսական օրգանների կողմից տարվող անգրագիտության լիկվիդացիայի և դպրոցներ կազմակերպելու գործին։

18) Աջակցում է պետական ձեռնարկությունների արտադրության նորմալ ընթացքին և ՀՄԲՄ միջոցով մասնակցում է ժողովրդական տնտեսության կարգավորման, սակայն վոչ մի տնտեսական-վարչական ֆունկցիաներ չվերցնելով իր վրա։

19) Ընդհանուր, պատվիրակային ու ցեխային ժողովներում, ընդհանուր գործարանային կոնֆերենցիաներում և արտադրական խոր-

գնահատիչ-կոնֆլիկտային հանձնաժողովները։

6) Հետևում է գործարանում տարվող սակացույցի (տարիֆի) աշխատանքներին։

7) Պատրաստում է կոլեկտիվ պայմանագրեր կնքելու նյութերը, մասնակցում է այդ պայմանագրերը կնքելուն և հետևում է նրանց կիրառմանը։

8) Հետևում է բանվորներ և ծառայողներ վարձելու և արձակելու աշխատանքներին, համաձայն աշխատանքի օրենքի կոդեքսի։

9) Հետևում է բանվորների ու ծառայողների աշխատավարձի իր ժամանակին վճարելուն։

10) Հետևում է արհեստանոցներում սանիտարական կանոնների կատարման և աշխատանքի պաշտպանության լավ պայմաններ ստեղծելուն։

11) Հետևում է վարչության կողմից աշխատանքի պաշտպանության և սոցիալական ապահովագրության բոլոր նորմաների կատարելուն և ապահովագրական մուծանքները իր ժամանակին մտցնելուն։

12) Մասնակցում է բանվորներին բնակարանով ապահովելու գործին։



13) Հետևում է դեռահասների և կանանց աշխատանքի պաշտպանության կիրառմանը։

14) Աջակցում է կոոպերացիայի զարգացմանը։

15. Տանում է փոխադարձ օգնության դրամարկղներ կազմակերպելու աշխատանքները և իրականացնում նրանց ընդհանուր ղեկավարությունը։

16) Տանում է դասընթացքներ, ակումբներ, գրադարաններ և այլն կազմակերպելու աշխատանքներ։

17) Աջակցում է պետորգանների և տնտեսական օրգանների կողմից տարվող անգրագիտության լիկվիդացիայի և դպրոցներ կազմակերպելու գործին։

18) Աջակցում է պետական ձեռնարկությունների արտադրության նորմալ ընթացքին և ՀՄԲՄ միջոցով մասնակցում է ժողովրդական տնտեսության կարգավորման, սակայն վոչ մի տնտեսական-վարչական ֆունկցիաներ չվերցնելով իր վրա։

19) Ընդհանուր, պատվիրակային ու ցեխային ժողովներում, ընդհանուր գործարանային կոնֆերենցիաներում և արտադրական խոր-

հրդակցություններում սարքում է պետական և կոոպերատիվ ձեռնարկությունների գործարանային վարչությունների զեկուցումներ, ծանոթացնելով նրանց արտադրության ընթացքի և դրության հետ։

§ 81. Գործկոմը բոլոր ձեռնարկություններում ընտրվում է բանվորների և ծառայողների ընդհանուր ժողովներում մի տարով, համաձայն մոտավորապես հետևյալ նորմայի՝

Բանվորների հետևյալ քանակ ունեցող ձեռնարկություններում

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 25-ից | մինչև | 100 մարդ | 5 | անդ. | կազմ. |
| 100 » | » | 300 » | 7 | » | » |
| 300 » | » | 1000 » | 8 | » | » |
| 1000 » | » | 5000 » | 17 | » | » |
| 5000 » | » | 7000 » | 19 | » | » |
| 7000 և | ավելի | | 21 | » | » |

§ 82. Գործկոմի անդամները առանց բայկոմի (յենթարայկոմի) համաձայնության չեն կարող արձակվել։

§ 83. Գործկոմներն ու հանձնաժողովները իրենց նիստերին կարող են խորհրդակցական ձայնի իրավունքով հրավիրել տեղյակ անձանց.

§ 84 Գործարանային կոմիտեյի ընտրված



կազմը տոմարագրվում է բայկոմի կողմից և այդ կազմի մասին տեղեկացվում է ձեռնարկության վարչությանը։

§ 85. Տվյալ ձեռնարկության մեջ աշխատող միության անդամների կեսից վոչ պակասի պահանջով կամ միութենական բարձր որգանի վորոշմամբ գործարանային ամբողջ կոմիտեն, ինչպես և նրա առանձին անդամները կարող են վերընտրվել և մինչև նրանց լիազորության ժամկետի լրացումը։

§ 86. Գործկոմում մշտական աշխատանքներ տանելու համար արտադրության մեջ աշխատելուց ազատված անդամների (գործկոմի) թիվը վորոշվում է աշխատանքային որենսդրությամբ սահմանված նորմաներով։

Ծանոթ.—Գնահատիչ - կոնֆլիկտային հանձնաժողովներում աշխատելու համար գործկոմի աշխատանքներից հարկավոր քանակով ներկայացուցիչների ազատումը կատարվում է անկախ մատնանշված նորմաներից և նախատեսնվում է կոլեկտիվ պայմանագրով։

§ 87. Գործկոմը իր միջից ընտրում է նախագահ և գանձապահ, ըստ վորում գանձապա-

նի ֆունկցիաները կարող են դրվել գործկոմի ինչպես ազատված, այնպես էլ չազատ անդամների վրա: Գանձապահի ֆունկցիաները չեն կարող դրվել գործկոմի նախագահի և քարտուղարի վրա։

§ 88. Գործկոմում աշխատանքից 2-ից ավելի ազատված անդամների առարկության դեպքում գործկոմի՝ միութենական աշխատանքների զանազան ճյուղերին վերաբերող վորոշումների կյանքում գործնականապես կիրառելու աշխատանքները բաժանվում են նրանց մեջ։

89. Գործկոմի այն անդամները, վորոնք ազատված չեն աշխատանքից, բայց կատարում են միութենական այս կամ այն պարտականությունները, գործնական ձեռնարկումների կյանքում կիրառելը իրականացնում են գործկոմի այն ազատ անդամների միջոցով, վորոնք տանում են միութենական համապատասխան ճյուղի աշխատանքները։

§ 90. Գործկոմի ժողովներում բոլոր հարցերը որակարգի մեջ են մտցնվում նրա նախագահի միջոցով։

§ 91. Գործկոմը թե իր և թե ընդհանուր ժողովների (ընդհանուր գործարանային կոնֆերենցիաների և պատվիրակային ժողովների) գործավարությունը, հաշվետարությունը և արձանագրությունները տանում է միության կողմից վորոշված ձևերով։

§ 92. Գործարանային կոմիտեն միութենական բարձր որգանների կողմից վորոշած ժամկետներում, իր աշխատանքների մասին հաշվետվություններ է ներկայացնում միության յենթարայկոմին կամ րայկոմին, ընդհանուր ժողովին կամ ընդհանուր-գործարանային կոնֆերենցիաներին, յուրաքանչյուր 6 ամիսը մի անգամ։

§ 93. Գործկոմը ձեռնարկության բանվորներին և ծառայողներին իր վորոշումների մասին տեղեկացնում է, հեշտ նկատելի տեղերում կախելով իր արձանագրությունները և հայտարարությունները, ինչպես և լրագրների միջոցով՝ գումարելով ընդհանուր ժողովներ, ընդհանուր-գործարանային կոնֆերենցիաներ և պատվիրակային ժողովներ։

§ 94. Գործկոմի պահելու միջոցները ստացվում են ձեռնարկությունից, աշխատողների աշխատավարձի 2%-ից վոչ բարձր չափով, և ծախսվում են միության րայկոմի (յենթարայ-

կոմի) հաստատած նախահաշիվների համաձայն։

ե) Գործկոմի հանձնաժողովները.

